Հավելված
Հաստատվել է ՀՀ ՀՊ
2022թ. մայիսի 5-ի թիվ 126-Ա որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆԻՉ ՊԱԼԱՏ

ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

Բովանդակություն

Ներածական մաս 3- 4 էջեր

Ամփոփագիր 4 - 6 էջեր

Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշները 6 – 13 էջեր

Անհամապատասխանությունների
վերաբերյալ գրառումներ 13 - 20 էջեր

Արձանագրված այլ փաստեր 20 – 26 էջեր

ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

Հաշվեքննության հիմքը	ՀՀ հաշվեքննիչ պալատի 2022 թվականի փետրվարի 4-ի թիվ 37-Ա որոշում:
Հաշվեքննության օբյեկտը	ՀՀ ոստիկանություն:
Հաշվեքննության առարկան	2021 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն:
Հաշվեքննության առարկայի չափանիշներ	ՀՀ կառավարության 30.12.2020թ. «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշում:
Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը	2021 թվականի հունվարի 1-ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը:
Հաշվեքննության կատարման ժամկետը	2022 թվականի փետրվարի 14-ից մինչև ապրիլի 30-ը:
Հաշվեքննության մեթոդաբանությունը	Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքին, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանություններին, «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի» համաձայն Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը :

Հաշվեքննություն իրականացնող կառուցվածքային ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի իններորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է Հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագուլյանը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն 2021 թվականի ընթացքում հավաքագրվել է 31,801,424.6 հազ. դրամ բյուջետային եկամուտներ: Պլանային ցուցանիշը գերակատարվել է 11,548,918.5 հազ. դրամով: Եկամուտների ավելացումը պայմանավորված է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ու անձնագրերի և վիզաների վարչության կողմից մատուցված ծառայություններից մուտքերի և երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գերակատարումներով, ինչպես նաև պետական պահպանություն իրականացնող ստորաբաժանումների կողմից հավաքագրված եկամտով, որը ծրագրային ցուցանիշներով նախատեսված չէր, քանի որ ՀՀ ոստիկանության պետի 08.11.2019թ. թիվ 3320-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն 2021 թվականից նախատեսվել էր դադարեցնել ոստիկանության ստորաբաժանումների կողմից տվյալ ծառայությունների մատուցումը:

2021 թվականի համար ՀՀ ոստիկանությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 64,652,455.9 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 66,365,634.7 հազ. դրամ, ֆինանսավորվել է 65,476,341.8 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 65,463,002.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.6 %-ը:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն: Ընտրված 174 աշխատողների 2021

թվականի 12 ամիսների աշխատավարձերի ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ աշխատողների աշխատավարձերը և հավելավճարները հիմնականում հաշվարկվել ու վճարվել են օրենսդրության պահանջներին համապատասխան: Բացառություն են կազմել.

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ստորաբաժանման կապիտանին աշխատավարձի մասով ավելի վճարված գումարը: Պարզվել է, որ 2021 թվականի 12 ամիսներին ծառայողին յուրաքանչյուր ամիս 279,772 դրամի փոխարեն վճարվել է 301,598 դրամ աշխատավարձ: Փաստացի, ծառայողին ավելի է վճարվել ընդամենը 261.9 հազ. դրամ աշխատավարձ:
- ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Թումանյանի պահպանության բաժնի ավագ լեյտենանտին լրավճարի մասով ավելի վճարված գումարը: Պարզվել է, որ 2021 թվականի 12 ամիսներին ծառայողին յուրաքանչյուր ամիս 5,889 դրամի փոխարեն վճարվել է 6,694 դրամ լրավճար, կամ ավելի է վճարվել ընդամենը 9.7 հազ. դրամ լրավճար:

Ծրագրային միջոցառումների կատարման համար ՀՀ ոստիկանության կողմից կնքված ապրանքների և ծառայությունների գնման պայմանագրերի մասով արձանագրվել է.

- 2021 թվականի հունվարի 29-ին ՀՀ ոստիկանության և «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ միջև կնքվել է պետության կարիքների համար ծառայությունների մատուցման թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17 պայմանագիր՝ 39,000.0 հազ. դրամ արժեքով, որով «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ պարտավորվել է մատուցել ճանապարհային նշանների տեղադրման 16 տեսակի ծառայություններ: Պայմանագրի շրջանակում տարվա ընթացքում կատարողի կողմից մատուցվել է 21,924.3 հազ. դրամի ծառայություններ:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի գրավոր առաջադրանքը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով: Հաշվեքննությամբ պարզվել

է, որ «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ կատարել է ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված բոլոր առաջադրանքները, որը կազմել է պայմանագրով նախատեսված ծավալի 56.2 %-ը: Ընդ որում, երեք տեսակի ծառայությունների մատուցման համար ՀՀ ոստիկանության կողմից կատարողին առաջադրանք չի ներկայացվել:

Պայմանագրի 5.3 կետով ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում սահմանվել է չմատուցված ծառայության գնի 0.05 տոկոսի չափով տույժ: Սակայն, 2021 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքների կատարման համար հանձնման ընդունման արձանագրությունները կազմվել են ամփոփ՝ յուրաքանչյուր ամսվա համար, որի արդյունքում հնարավոր չէ պարզել մատուցված ծառայություններների համապատասխանությունը գնման ժամանակացույցին (երկու աշխատանքային օր): Բացի այդ, կնքված պայմանագրով կարգավորված չէ ծառայությունների մատուցման ընթացքում պետական սեփականություն հանդիսացող փոխարինված հին նշանների, դետալների և նյութերի հանձնման ընդունման գործընթացը:

ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված հաշվետվության համաձայն 2021 թվականի ընթացքում հավաքագրվել է 31,801,424.6 հազ. դրամ բյուջետային եկամուտներ (աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի ընթացքում գանձված պետական տուրքի և այլ եկամտատեսակների մուտքերի կատարողական

հազ. դրամ

Բյուջետային եկամուտների անվանում	Հաշվետու ժամանակահատվածի ծրագրային ցուցանիշ	Հաշվետու ժամանակահատվածում ստացված եկամուտ
Պետական տուրքեր	7,938,132.0	7,179,758.2
Պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալությունից եկամուտներ	36,088.9	20,294.7
Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցների մուտքեր	9,181,074.4	14,332,066.3

ՀՀ ոստիկանության կողմից ծառայությունների մատուցումից մուտքեր	3,072,010.8	10,252,841.1
ՀՀ ոստիկանության ծառայողների կողմից ուսման ծախսերի փոխհատուցման մուտքեր	25,000.0	13,634.4
Պետությանը պատճառած վնասի փոխհատուցումից մուտքեր	200.0	309.9
Տոկոսավճարներ և շահաբաժիններ	-	2,520.0
Ընդամենը	**20,252,506.1**	**31,801,424.6**

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության կողմից հավաքագրվել է նախատեսվածից 11,548,918.5 հազ. դրամով ավելի եկամուտ: Եկամուտների ավելացումը պայմանավորված է ՀՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության ու անձնագրերի և վիզաների վարչության կողմից մատուցված ծառայություններից մուտքերի և երթևեկության անվտանգության ապահովման բնագավառում իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի գերակատարումներով, ինչպես նաև պետական պահպանություն իրականացնող ստորաբաժանումների կողմից հավաքագրված եկամուտով, որը ծրագրային ցուցանիշներով նախատեսված չէր, քանի որ ՀՀ ոստիկանության պետի 08.11.2019թ. թիվ 3320-Ա հրամանով հաստատված ժամանակացույցի համաձայն 2021 թվականից նախատեսվել էր դադարեցնել ոստիկանության ստորաբաժանումների կողմից տվյալ ծառայությունների մատուցումը:

2021 թվականի համար ՀՀ ոստիկանությանը պետական բյուջեի ծրագրերով նախատեսվել է հատկացնել 64,652,455.9 հազ. դրամ, ճշտված պլանը կազմել է 66,365,634.7 հազ. դրամ, ֆինանսավորվել է 65,476,341.8 հազ. դրամ (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՀՀ ոստիկանության 2021 թվականի ֆինանսավորումը պետական բյուջեից

հազ. դրամ

Ծրագրային միջոցառում	**Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան**	**Ֆինանսավորում**	**Դրամարկղային ծախս**	**Փաստացի ծախս**
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն				

Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում	13,357,589.4	12,911,083.4	12,898,324.8	12,809,194.7
Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում	3,959,132.3	3,951,843.9	3,951,602.5	3,950,657.0
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	5,385,402.7	5,359,798.6	5,359,798.6	5,344,118.9
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում	11,666,861.3	11,408,145.6	11,408,123.7	11,970,638.5
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում	1,149.3	840.0	840.0	119,953.9
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում	1,943,591.8	1,916,967.4	1,916,967.4	1,928,156.3
Առողջապահական ծառայությունների տրամադրում	502,782.7	499,469.8	499,469.8	499,469.8
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց	39,632.2	35,722.5	35,722.5	32,932.6
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար	25,025,385.5	24,980,537.9	24,980,220.7	24,984,579.0
ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ	9,790.4	9,790.4	9,790.4	9,790.4
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում	2,361,062.9	2,299,747.5	2,299,747.5	2,299,747.5
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում	3,200.0	3,199.1	3,199.1	3,199.1

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում	130,517.4	130,517.3	130,517.3	130,517.3
ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում	118,816.9	113,492.5	113,492.5	113,492.5
Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում	294,818.2	289,284.3	289,284.3	124,216.5
Ոստիկանության կրթական ծառայություններ				
Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն	920,679.5	920,679.5	920,679.5	920,679.5
Միջին մասնագիտական կրթության ծառայություն	387,451.2	387,451.2	387,451.2	387,451.2
Նախնական մասնագիտական կրթության ծառայություն	257,771.1	257,771.1	257,771.1	257,771.1
Ընդամենը	66,365,634.7	65,476,341.8	65,463,002.7	65,886,565.8

ՀՀ ոստիկանության 2021 թվականի ծախսերի ճշտված պլանի դիմաց դրամարկղային ծախսը կազմել է 65,463,002.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.6 %-ը:

ՀՀ պետական բյուջեով 2021 թվականին ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող միջոցառումները խմբավորվել են երկու ծրագրերում:

«Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումներ, մոնիտորինգ և վերահսկողություն» ծրագրով, որի 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 64,799,732.9 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 63,910,440.0 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 63,897,100.9 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.6 %-ը: Ծրագրի միջոցառումները տասնհինգն են, որոնց արդյունքի չափորոշիչների տարեկան կատարողականի տարբերությունները ներկայացված են հավելված 1-ով:

- «Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում» միջոցառում, որի 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 13,357,589.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 12,911,083.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 96.7 %-ը, դրամարկղային ծախսը կազմել է

12,898,324.8 հազ. դրամ: Միջոցառման համար սահմանված են ինը արդյունքի չափորոշիչներ:

- «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 3,959,132.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 3,951,843.9 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 3,951,602.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 5,385,402.7 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 5,359,798.6 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.5 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ:
- «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 11,666,861.3 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 11,408,145.6 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 11,408,123.7 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնհինգ արդյունքի չափորոշիչներ:
- «Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,149.3 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 840.0 հազ. դրամ կամ ճշտված պլանի 73.1 %-ը: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ:
- «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում

կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,943,591.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 1,916,967.4 հազ. դրամ կամ ճշտված պլանի 98.6 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնհինգ արդյունքի չափորոշիչներ:

- «Առողջապահական ծառայությունների տրամադրում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 502,782.7 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել 499,469.8 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.3 %-ը: Միջոցառման համար սահմանված են հինգ արդյունքի չափորոշիչներ:
- «Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 39,632.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 35,722.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 90.1 %-ը: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ:
- «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 25,025,385.4 հազ. դրամ, ֆինանսավորումը կազմել է 24,980,537.7 հազ. դրամ, դրամարկղային ծախսը՝ 24,980,220.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 99.8 %-ը: Միջոցառման համար սահմանված են տասնչորս արդյունքի չափորոշիչներ:
- «ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից դիմումներ, հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներ» միջոցառման կատարման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 9,790.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և

դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:

- «ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 2,361,062.9 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 2,299,747.5 հազ. դրամ կամ ճշտված պլանի 97.4 %-ը: Միջոցառման համար սահմանված են ինը արդյունքի չափորոշիչներ:
- «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 3,200.0 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար արդյունքի չափորոշիչներ սահմանված չեն:
- «ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 130,517.4 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության տեխնիկական կարիքի բավարարում» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 118,816.9 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 113,493.5 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 95.5 %-ով: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «Ոստիկանության բաժանմունքների շենքային պայմանների բավարարում» միջոցառման կատարման 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 294,818.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կազմել են 289,284.3 հազ. դրամ կամ ճշտված պլանը կատարվել է 98.1 %-ով: Միջոցառման համար սահմանված է մեկ արդյունքի չափորոշիչ:

«Ոստիկանության կրթական ծառայություններ» ծրագրով, որի 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 1,565,901.8 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Ծրագրի միջոցառումները երեքն են:

- «Բարձրագույն մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 920,679.5 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են յոթ արդյունքի չափորոշիչներ:
- «Միջին մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 387,451.2 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են չորս արդյունքի չափորոշիչներ:
- «Նախնական մասնագիտական կրթության ծառայություն» միջոցառման կատարման համար 2021 թվականի ծախսը ճշտված պլանով նախատեսվել է 257,771.1 հազ. դրամ, ֆինանսավորումը և դրամարկղային ծախսը կատարվել են 100 %-ով: Միջոցառման համար սահմանված են երեք արդյունքի չափորոշիչներ:

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման ճշտության ընտրանքային ուսումնասիրություն: Արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության ստորաբաժանման կապիտանին աշխատավարձի մասով վճարվել է ավելի գումար: Պարզվել է, որ 2021 թվականի 12 ամիսներին ծառայողին յուրաքանչյուր ամիս 279,772 դրամի փոխարեն վճարվել է 301,598 դրամ աշխատավարձ: Փաստացի, ծառայողին ավելի է վճարվել ընդամենը 261.9 հազ. դրամ աշխատավարձ:

- ՀՀ ոստիկանության ՊՊԳՎ Թումանյանի պահպանության բաժնի ավագ լեյտենանտին լրավճարի մասով վճարվել է ավելի գումար: Պարզվել է, որ 2021 թվականի 12 ամիսներին ծառայողին յուրաքանչյուր ամիս 5,889 դրամի փոխարեն վճարվել է 6,694 դրամ լրավճար, կամ ծառայողին ավելի է վճարվել ընդամենը 9.7 հազ. դրամ լրավճար:

ՀՀ ոստիկանության 2021 թվականի պետական բյուջեի վեց և ինն ամիսների հաշվեքննությամբ արձանագրվել էր.

- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքապետը սույն բնագավառում իրականացնում է հետևյալ պատվիրակված լիազորությունները.

1) Երևանի տարածքում ճանապարհային երթևեկության կարգավորումը՝ ճանապարհային գծանշումների, ինչպես նաև երթևեկության նշանների և լուսացույցների (բացառությամբ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում ժամանակավոր տեղադրվածների) տեղադրման միջոցով: Սակայն, Երևան քաղաքում ճանապարհային գծանշումներ ձեռք բերելու համար ՀՀ պետական բյուջեից 475,000.0 հազ. դրամ նախատեսվել է ՀՀ ոստիկանության 2021 թվականի գնումների պլանի «ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածով: ՀՀ ոստիկանության կողմից գնման ձև է սահմանվել բաց մրցույթը: ՀՀ ոստիկանությունը գծանշման ծառայություններ ձեռք բերելու համար 11.12.2020թ. ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19 ծածկագրով հայտարարել է հրատապ բաց մրցույթ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 2020 թվականի դեկտեմբերի 28-ը: Մրցույթի հրավերով նախատեսված ծառայությունների մատուցման համար պահանջվել է՝ «մասնակից կազմակերպությունում աշխատող նվազագույնը 20 աշխատակիցների առկայություն՝ նմանատիպ աշխատանքային փորձի առկայությամբ, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայություն՝ նվազագույնը չորս բեռնատար ավտոմեքենա, գծանշման համար անհրաժեշտ նվազագույնը երեք գծանշող սարքավորում և մեկ մեքենա, տերմոպլաստիկի համար նախատեսված երկու մեքենասարքավորում, սառը

պլաստիկի համար նախատեսված սարքավորում, գծանշման նվազագույնը մեկ ապագծանշող սարքավորում և փոշեմաքրման նվազագույնը երեք սարքավորում»: Սակայն, մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված դիմում հայտարարություններով աշխատանքային փորձի առկայությամբ աշխատակիցների, ինչպես նաև անհրաժեշտ տեխնիկական միջոցների առկայության վերաբերյալ տեղեկատվություն չի տրամադրվել:

Մրցույթին մասնակցել են երեք կազմակերպություններ՝ «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, որը պետական գրանցում է ստացել 2020 թվականի դեկտեմբերի 24-ին, «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Ասկետ-16» ՍՊԸ՝ ներկայացնելով համապատասխանաբար՝ 466,776.0 հազ. դրամ, 466,800.0 հազ. դրամ և 468,000.0 հազ. դրամ գնային առաջարկներ: Գնահատող հանձնաժողովի կողմից հաղթող է ճանաչվել ներկայացված նվազագույն գնային առաջարկը: Դրանից հետո՝ 2020 թվականի դեկտեմբերի 30-ին «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի և «Ուկռինվեստ» ՍՊԸ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի է ունեցել միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում, չնայած ներկայացված գնային առաջարկների ընդամենը 24.0 հազ. դրամի տարբերության, գնահատող հանձնաժողովին չի հաջողվել նվազեցնել մրցույթին առաջարկված գները: 2021 թվականի հունվարի 14-ին «Ուկռինվեստ» ՍՊԸ տնօրենը ստանձնել է նաև «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ տնօրենի պաշտոնը (2021 թվականի փետրվարի 8-ից հանդիսանում է «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ 100 տոկոս բաժնետեր) և 2021 թվականի հունվարի 16-ին կնքել է «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ և ՀՀ ոստիկանության միջև թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԳԾԱՆՇԱՆ-19 ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագիրը:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի գրավոր առաջադրանքը կատարողի կողմից ստանալու օրվանից 24 ժամվա ընթացքում՝ այդ առաջադրանքում նշված վայրերում: Հաշվեքննությամբ պարզվել է, որ հանձնման ընդունման արձանագրությունների կազմման համար «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված հաշվետվություններում առկա են նաև գծանշման վայրեր, որոնք ներառված չեն ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված գծանշման կատարման առաջադրանքներում: Մասնավորապես, թիվ 2 հանձնման ընդունման արձանագրությունում առկա է Թումանյան փողոցում 1866 գծմ և Սասունցի Դավիթ փողոցում 1293 գծմ իրականացված գծանշումների ծավալ, որը սահմանված չէր ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքներով:

Պայմանագրի 5.3 կետով ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում նախատեսված է չմատուցված ծառայության գնի 0.05 տոկոսի չափով տույժ: Սակայն, 2021 թվականի ապրիլ և մայիս ամիսների ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքների կատարման համար հանձնման ընդունման արձանագրությունները կազմվել են ամփոփ, յուրաքանչյուր ամսվա համար, և արդյունքում հնարավոր չէ պարզել մատուցված ծառայություններների համապատասխանությունը գնման ժամանակացույցին:

- 2020 թվականի դեկտեմբերի 11-ին ՀՀ ոստիկանության կողմից հայտարարվել է ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ԱԶԴԱՆՇԱՆ-18 ծածկագրով գնման ընթացակարգ՝ Երևան քաղաքում լուսաազդանշանների պահպանման ծառայությունների ձեռքբերման համար: Մրցույթին մասնակցել է չորս կազմակերպություն՝ «Լոկատոր» ՓԲԸ՝ 258,348.0 հազ. դրամ, «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ 258,400.0 հազ. դրամ, «Ուկռինվեստ» ՍՊԸ՝ 258,412.0 հազ. դրամ և «Ասկետ-16» ՍՊԸ՝ 264,000.0 հազ. դրամ գնային առաջարկներով: Դեկտեմբերի 30-ին տեղի են ունեցել միաժամանակյա բանակցություններ, որին մասնակցել են «Լոկատոր» ՓԲԸ և «Ուկռինվեստ» ՍՊԸ ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում «Լոկատոր» ՓԲԸ-ն գնի նվազեցում է կատարել մինչև 258,148.0 հազ. դրամ կամ գնային առաջարկը նվազել է ընդամենը 200.0 հազ. դրամով (առաջարկված գնի 0.1%) և ճանաչվել է հաղթող:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ «Լուսացուցային օբյեկտների սպասարկում, պահպանում, շահագործում և վթարավերականգնում» ծառայության համար տեխնիկական բնութագրով նկարագրված են մի շարք աշխատանքներ,

որոնք ենթակա են կատարման ծառայության մատուցման շրջանակներում, մանրամասն նշելով դրանց կատարման ժամանակային պարբերականությունները՝ 10 օր, ամիսը մեկ, երեք ամիսը մեկ և այլ: Սակայն, այդ ծառայության մատուցման համար նկարագրված չեն Երևան քաղաքի սպասարկման ենթակա լուսացույցային 249 օբյեկտները ըստ առկա լուսացույցների քանակների, տեսակների (հետիոտնային կամ տրանսպորտային) և լուսացույցների խմբի: Պայմանագրի շրջանակում ներկայացված փաստաթղթերով հնարավոր չէ պարզել յուրաքանչյուր ամիս սպասարկված օբյեկտների քանակը, ինչպես նաև այդ օբյեկտներում աշխատանքների կատարումը 10-օրյա, ամսական կամ եռամսյակային պարբերականությամբ:

Պայմանագրի տեխնիկական բնութագիր գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի կողմից գրավոր առաջադրանքը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված 5 կամ 10 աշխատանքային օրվա ընթացքում (պայմանավորված ծառայության տեսակով), առաջադրանքում նշված վայրերում ու քանակներով: Սակայն, կատարողի կողմից ներկայացված հանձնման ընդունման արձանագրությունները և պայմանագրի արդյունքը պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ ակտերը կազմվել են մեկամսյա ժամկետում փաստացի կատարվածի համար: Հետևաբար, հնարավոր չէ պարզել ծառայությունները մատուցվել են առաջադրանքով սահմանված համապատասխան ժամկետներում, թե այդ ժամկետների խախտումով, որի համար պայմանագրի 5.3 կետով նախատեսված է տույժերի հաշվարկում և գանձում:

Առկա են անհամապատասխանություններ առաջադրանքներով նախատեսված և հանձնման ընդունման արձանագրությունով փաստացի կատարված աշխատանքների միջև: Այսպես, 2021 թվականի մարտի 15-ին տրված թիվ 2-րդ առաջադրանքով ենթակա էր «Արդիականացման նպատակով առկա տրանսպորտային լուսացույցի տեղադրում առկա կոնսուլի, ճոպանի կամ կանգնակի վրա» ծառայության մատուցում 23 հատ: Սակայն, ըստ 2021 թվականի

ապրիլի 2-ի թիվ 3 հանձնման ընդունման արձանագրության, փաստացի կատարվել է 25 հատի տեղադրում և վճարվել է 120.0 հազ. դրամ ավելի գումար: 2021 թվականի օգոստոսի 15-ին տրված թիվ 10-րդ առաջադրանքով ենթակա էր «Արդիականացման նպատակով լուսացույցային կանգնակի պատրաստում և տեղադրում» ծառայության մատուցում 8 հատ: Սակայն, ըստ 2021 թվականի օգոստոսի 31-ի թիվ 8 հանձնման ընդունման արձանագրության, փաստացի կատարվել է 9 հատի տեղադրում և վճարվել է 70.5 հազ. դրամ ավելի գումար: Փաստորեն, պայմանագրի շրջանակում «Լոկատոր» ՓԲԸ կողմից մատուցվել են չպատվիրված ծառայություններ, իսկ ՀՀ ոստիկանությունը դրանց դիմաց կատարել է վճարում:

Բացի այդ, կնքված պայմանգրով կարգավորված չէ ծառայությունների մատուցման ընթացքում պետական սեփականություն հանդիսացող փոխարինված հին սարքերի, դետալների և նյութերի հանձնման ընդունման գործընթացը:

Ծրագրային միջոցառումների տարեկան կատարման համար ՀՀ ոստիկանության կողմից կնքված ապրանքների և ծառայությունների գնման պայմանագրերի ընտրանքային ուսումնասիրությամբ արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանության կողմից 2020 թվականի դեկտեմբերի 11-ին հրապարակվել է «ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17» ծածկագրով գնման ընթացակարգի հրավեր: Մրցույթին մասնակցել են չորս ընկերություններ՝ «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, «Ուկռինվեստ» ՍՊԸ, «Ասկետ-16» ՍՊԸ և «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ, որոնք ներկայացրել են համապատասխանաբար՝ 40,716.0 հազ. դրամ, 40,716.6 հազ. դրամ, 42,000.0 հազ. դրամ և 40,716.6 հազ. դրամ գնային առաջարկներ: 2020 թվականի դեկտեմբերի 30-ին կայացել է միաժամանակյա բանակցություններ, որին մասնակցել են «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ, «Ուկռինվեստ» ՍՊԸ և «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ ներկայացուցիչները: «Ուկռինվեստ» ՍՊԸ-ն գնի նվազեցում է կատարել մինչև 40,200.0 հազ. դրամ, «Ռեգիոնստրոյսերվիս» ՍՊԸ՝ մինչև 39,500.0 հազ. դրամ, «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ՝ մինչև 39,000.0 հազ. դրամ:

2021 թվականի հունվարի 29-ին ՀՀ ոստիկանության և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ միջև կնքվել է պետության կարիքների համար ծառայությունների մատուցման թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17 պայմանագիրը, որով «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ պարտավորվել է մատուցել ճանապարհային նշանների տեղադրման 16 տեսակի ծառայություններ: Պայմանագրի շրջանակում տարվա ընթացքում կատարողի կողմից մատուցվել է 21,924.3 հազ. դրամի ծառայություններ:

Պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված է, որ ծառայությունը մատուցվում է պատվիրատուի գրավոր առաջադրանքը ստանալու օրվան հաջորդող օրվանից հաշված երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ առաջադրանքում նշված վայրերում և քանակներով: Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման ընդունման արձանագրությունները և ՀՀ ոստիկանության կողմից տրված գրավոր առաջադրանքները (հավելված 2): Պարզվել է, որ «Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ կատարել է ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված բոլոր առաջադրանքները, որը կազմել է պայմանագրով նախատեսված ծավալի 56.2 %-ը: Ընդ որում, երեք տեսակի ծառայությունների մատուցման համար ՀՀ ոստիկանության կողմից կատարողին առաջադրանք չի ներկայացվել:

Պայմանագրի 5.3 կետով ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում սահմանվել է չմատուցված ծառայության գնի 0.05 տոկոսի չափով տույժ: Սակայն, 2021 թվականի ընթացքում ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված առաջադրանքների կատարման համար հանձնման ընդունման արձանագրությունները կազմվել են ամփոփ՝ յուրաքանչյուր ամսվա համար, որի արդյունքում հնարավոր չէ պարզել մատուցված ծառայություններների համապատասխանությունը գնման ժամանակացույցին՝ երկու աշխատանքային օր:

Արձանագրվել է նաև, որ կնքված պայմանագրով կարգավորված չէ ծառայությունների մատուցման ընթացքում պետական սեփականություն

հանդիսացող փոխարինված հին նշանների, դետալների և նյութերի հանձնման ընդունման գործընթացը:

ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

ՀՀ հաշվեքննիչ պալատի «Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության» ուղեցույցի հիման վրա մշակված մեթոդական ցուցումներով ՀՀ ոստիկանության 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության նվազագույն ծածկույթը ապահովելու համար պլանավորվել և հաշվեքննության են ենթարկվել պետական բյուջեի ծրագրերի միջոցառումներով կատարված հետևյալ ծախսերը.

1. «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր:
2. «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» ու «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» միջոցառումների շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր:
3. «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» միջոցառման շրջանակում աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսեր:
4. Առանձին միջոցառումների շրջանակում ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների և ծառայությունների գնման համար կնքված 4 պայմանագրեր, որոնցով 2021 թվականին կատարված ծախսերը գումարային կազմել են 80,379.5 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում կատարվել է ՀՀ ոստիկանության աշխատողների աշխատավարձերի և պարգևավճարների հաշվարկի և վճարման

ճշտության ընտրանքային ուսումնասիրություն: ՀՀ ոստիկանության «Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար» (միջոցառում 1), «Պետական պահպանության ծառայությունների կազմակերպում և իրականացում» (միջոցառում 2), «Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում» (միջոցառում 3) և «Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում» (միջոցառում 4) բյուջետային ծրագրային միջոցառումներով հատկացված միջոցներով վարձատրվող աշխատողների հաստիքացուցակներից համակարգչային ծրագրի միջոցով կատարվել է 174 աշխատողների պատահական ընտրություն ընդհանուր թվակազմից՝ ըստ պաշտոնների յուրաքանչյուր խմբի: Ընդ որում, ընտրության արդյունքները ճշգրտվել են այնպես, որ յուրաքանչյուր պաշտոնների խմբից ընտրվի առնվազն մեկ աշխատող (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀՀ ոստիկանության աշխատողների համակարգչային ծրագրի միջոցով պատահական ընտրություն

Պաշտոնների խումբ	Միջոցառում 1		Միջոցառումներ 2 և 3		Միջոցառում 4	
	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ	ընտրված աշխատողների քանակ	ճշգրտված քանակ
Գլխավոր խումբ	2	2	1	1	1	1
Ավագ խումբ	6	6	0	1	1	1
Միջին խումբ	38	38	2	2	1	1
Կրտսեր խումբ	59	59	28	28	1	1
Քաղ. հատուկ ծառայող	1	1	0	0	6	6
Քաղ. աշխատանք կատարող և տեխ. սպասարկող	6	6	19	19	1	1
Ընդամենը	112	112	50	51	11	11

Ընտրված աշխատողների 2021 թվականի 12 ամիսների աշխատավարձերի ցուցակների ուսումնասիրությունից պարզվել է, որ ընտրված աշխատողների աշխատավարձերը և հավելավճարները հիմնականում հաշվարկվել ու վճարվել են

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 710-Ն՝ «Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում զինվորական ծառայության պաշտոն զբաղեցնողների, քրեակատարողական ծառայության եվ փրկարար ծառայության ծառայողների լրավճարների դեպքերը, չափերը եվ վճարման կարգը սահմանելու մասին» որոշման և ՀՀ կառավարության 03.07.2014թ. թիվ 712-Ն՝ «Զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության մարմիններում, քրեակատարողական եվ փրկարար ծառայություններում ծառայության առանձնահատկություններով պայմանավորված հավելումների տրամադրման դեպքերը, դրանց վճարման չափերը եվ կարգը սահմանելու մասին» որոշման պահանջներին համապատասխան:

ՀՀ ոստիկանության 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննությամբ ընտրված առանձին ծրագրային միջոցառումների կատարման համար ՀՀ ոստիկանության կողմից ապրանքների և ծառայությունների կնքված գնման 123,964.6 հազ. դրամի չորս պայմանագրերը ներկայացված են աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4

Հաշվեքննության ենթարկված ՀՀ ոստիկանության պայմանագրեր

հազ. դրամ

Կատարող	Պայմանագրի համար	Պայմանագրի գումար	Վճարված գումար
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում			
«Մուլտի Մոթորս» ՍՊԸ	ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-80-ՄԻՆԻԱՎՏՈ-2021/ԱՎՏՈ-1	57,410.1	57,410.1
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
«ԱՎԱՆԱԳԱՐԴ ԷՅ ԷՄ» ՍՊԸ	ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17	39,000.0	21,924.3
«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-70-ԹԱԻՐՈՎ/2021/ՇԻՆ	10,554.5	0
«Ալիկանտե» ՍՊԸ	ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35	17,000.0	1,045.1
Ընդամենը		**123,964.6**	**80,379.5**

Հաշվեքննությամբ արձանագրվել է.

- ՀՀ ոստիկանությունը 2021 թվականի հոկտեմբերի 22-ին հայտարարել է ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-80-ՄԻՆԻԱՎՏՈ-2021/ԱՎՏՈ-1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդ ՀՀ ոստիկանության կարիքների համար տրանսպորտային սարքավորումների ձեռքբերման նպատակով: Հայտ է ներկայացրել միայն մեկ մասնակց՝ «Մուլտի Մոթորս» ՍՊԸ, որի հետ կնքվել է ապրանքի մատակարարման պայմանագիր՝ 57,410.1 հազ. դրամ արժեքով: Պայմանագրի շրջանակում ՀՀ ոստիկանությունը ձեռք է բերել չորս «ԳԱԶ» մակնիշի միկրոավտոբուս, մեկ հատը՝ 14,352.5 հազ. դրամով: Միկրոավտոբուսները մատակարարվել են պայմանագրի գնման ժամանակացույցին համապատասխան, որի դիմաց ՀՀ ոստիկանությունը վճարումը կատարել է ամբողջությամբ:
- ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի օգոստոսի 19-ին «ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-70-ԹԱԻՐՈՎ/2021/ՇԻՆ» ծածկագրով հրապարակվել է՝ ՀՀ ճանապարհային ոստիկանության ծառայության Թաիրով 14 հասցեում գտնվող վարչական շենքի երկու հարկերի ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման պետական գնման մրցույթի հրավեր: Մրցույթին մասնակցել են վեց ընկերություններ, որից նվազագույն՝ 10,554.5 հազ. դրամ գնային առաջարկ է ներկայացրել «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ: 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ՀՀ ոստիկանության և «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ միջև կնքվել է պետության կարիքների համար աշխատանքների կատարման պետական գնման թիվ ՀՀ Ո ԳՀԱՇՁԲ-70-ԹԱԻՐՈՎ/2021/ՇԻՆ պայմանագիրը: Պայմանգրով նախատեսված աշխատանքների կատարման արդյունքը կատարողը համապատասխան հանձնմնան ընդունման արձանագրությամբ հանձնել է 2021 թվականի դեկտմեբրի 20-ին: Սակայն, 2021 թվականի ընթացքում կատարողին պայմանագրով նախատեսված գումարը չի վճարվել և տարեվերջին «շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով առաջացել է 10,554.5 հազ. դրամի կրեդիտորական պարտք: ՀՀ ոստիկանության կողմից պայմանագրով նախատեսված գումարը փոխանցվել է «ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ 2022 թվականի

փետրվարի 16-ին: ՀՀ ոստիկանությունը պայմանագրով նախատեսված գումարի վճարումը ուշացրել է 34 աշխատանքային օրով, որի համար պայմանագրի 5.5 կետով վճարումը ուշացնելու դեպքում յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար պատվիրատուի նկատմամբ հաշվարկվում է տույժ՝ չվճարված գումարի 0.05 տոկոսի չափով:

- ՀՀ ոստիկանության կողմից 2021 թվականի փետրվարի 18-ին հրապարակվել է «ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35» ծածկագրով ավտոմոբիլների վրա տեղադրված էլեկտրական սարքավորումների վերանորոգման ծառայությունների գնման մրցույթի հրավեր: Մրցույթին մասնակցել են երեք ընկերություններ՝ «Ալիկանտե» ՍՊԸ, «Դառես» ՍՊԸ և «Ցոլակ Գևորգյան» Ա/Ձ: 2021 թվականի մարտի 4-ին գնահատող հանձնաժողովի կողմից կազմված թիվ 5 արձանագրության համաձայն կայացել են միաժամանակյա բանակցություններ, որի արդյունքում «Դառես» ՍՊԸ առաջարկել է վերանորոգման ծառայությունները իրականացնել միավորի համար՝ 273.0 հազ. դրամ գումարով: Նույն գինը առաջարկել է նաև «Ալիկանտե» ՍՊԸ, որը հանձնաժողովի կողմից չի ընդունվել, և գնահատող հանձնաժողովը մրցույթի հաղթող է ճանաչել «Դառես» ՍՊԸ: «Ալիկանտե» ՍՊԸ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է բողոք, որը 2021 թվականի մարտի 31-ին բավարարվել է և գնահատող հանձանժողովի կողմից կայացված որոշումը դադարեցվել է: 2021 թվականի ապրիլի 19-ին կայացած միաժամանակյա բանակցություններին մասնակցել են «Ալիկանտե» ՍՊԸ և «Դառես» ՍՊԸ ներկայացուցիչները: Բանակցությունների արդյունքում նվազագույն գին՝ 100.0 հազ. դրամ (առանց ԱՀՀ) առաջարկել է «Ալիկանտե» ՍՊԸ, որն էլ ճանաչվել է ընտրված մասանկից: 2021 թվականի մայիսի 5-ին ՀՀ ոստիկանության և «Ալիկանտե» ՍՊԸ միջև կնքվել է պետության կարիքների համար ծառայությունների մատուցման պետական գնման թիվ ՀՀ Ո ԳՀԾՁԲ-2021-ՃՈ/ԷԼՍ-35 պայմանագիր՝ 17,000.0 հազ. դրամ արժեքով (ներառյալ՝ ԱԱՀ): Պայմանագրի շրջանակում կատարողը տարվա

ընթացքում ՀՀ ոստիկանությանը մատուցել է ընդամենը 1,045.1 հազ. դրամի վերանորոգման ծառայություններ:

Հաշվեքննության ընթացքում հայտնաբերվել են անհամապատասխանություններ, որոնք համատարած չեն: Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանությունները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5

Հաշվեքննությամբ հայտնաբերված անհամապատասխանություններ

հազ. դրամ

Անհամապատասխանություն	Իրավական ակտ	Գումար
Չի կատարվել պայմանագրով նախատեսված ծավալի 43.8 %-ը	«Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17 պայմանագիր	
Կարգավորված չէ պետական սեփականություն հանդիսացող փոխարինված հին նշանների, դետալների և նյութերի հանձնման ընդունման գործընթացը	«Ավանագարդ Էյ Էմ» ՍՊԸ, թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17 պայմանագիր	
Ավելի է վճարվել աշխատավարձ և լրավճար		271.6

Հաշվեքննության իրականացման համար ՀՀ ոստիկանության կողմից ներկայացված 2021 թվականի ֆինանսական գործունեության հաշվետվությունների ցուցանիշները համադրվել են ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետարանի գործունեության էլեկտրոնային համակարգի LS Finance և LS Rep ծրագրերի տվյալների, ինչպես նաև առանձին հոդվածներով ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հետ, տարբերություններ չեն արձանագրվել:

Հաշվեքննության իրականացման համար պահանջված տեղեկատվությունը ներկայացվել է ամբողջությամբ և սահմանված ժամկետներում:

Հաշվեքննվող օբյեկտի ղեկավարությունը ծանոթացել է հաշվեքննության արդյունքներով կազմված արձանագրությանը, առարկություններ չունի:

Համաձայն «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջի՝ ընթացիկ եզրակացությունը ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում հաշվեքննիչ պալատին տրամադրել ընթացիկ եզրակացությունում արձանագրված անհամապատասխանությունների,

խեղաթյուրումների վերացման, առաջարկությունների իրականացման և ընթացիկ եզրակացությանը վերաբերող այլ գրավոր տեղեկատվություն:

Հաշվեքննիչ պալատի անդամ

Աբրամ Բախչագուլյան

Հավելված 1

2021 թվականի համար ՀՀ ոստիկանության ծրագրերով սահմանված արդյունքի չափորոշիչների ցուցանիշների տարբերություններ

Արդյունքի չափորոշիչ	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Փաստ	Տարբերություն
Ոստիկանության ոլորտի քաղաքականության մշակում, կառավարում, կենտրոնացված միջոցառումների, մոնիտորինգի և վերահսկողության իրականացում			
Ոստիկանության դեմ դատարաններում բերված հայցերի թիվ, հատ	3000	1809	1191
Ոստիկանության դեմ դատարաններում բերված /վարույթում առկա/ հայցերից բավարարվածների թիվ, հատ	4000	1822	2178
Ոստիկանությունում իգական սեռի ծառայողների/աշխատողների թվաքանակի մասնաբաժին, տոկոս	18.8	18.1	0,7
Պետական պահպանության ծառայություններ մատուցող ՀՀ ոստիկանության ստորաբաժանումների կարիքի բավարարում			
Պետական պահպանության ծառայությունների կողմից պահպանվող օբյեկտների թիվ, հատ	3520	3367	153
Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում և ճանապարհատրանսպորտային պատահարների կանխարգելում			
ՃՈ կողմից ճանապարհային երթևեկության անվտանգության օրենսդրության պահանջների խախտման համար նշանակված տուգանքների և ճանապարհային երթևեկության կանոնների, ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական նորմերի պահանջների խախտման համար նշանակված տուգանքների քանակ, հատ	2420000	2235911	184089
Տրամադրված հաշվառման վկայագրերի քանակ, հատ	240000	171944	68056

Ընդունված տեսական և գործնական քննությունների թիվ, հատ	126000	86723	39277
Գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցելու, վերագրանցելու, հաշվառումից հանելու, ինչպես նաև դրանց գրանցման տվյալների փոփոխության հետ կապված գործողություններ, հատ	800	309	491
Վարման իրավունքի վկայականի կրկնօրինակի տրամադրում, հատ	40	15	25
Տրանսպորտային միջոցների պետական հաշվառում			
Տրամադրված հաշվառման համարանիշերի քանակ, հատ	402400	340219	62181
Անձի անհատական տվյալների, քաղաքացիության և հաշվառման վերաբերյալ տեղեկությունների ստացման, տրամադրման և փոխանակման ծառայությունների մատուցում, ճամփորդական փաստաթղթերում կենսաչափական տեխնոլոգիաների ներդրում			
Տրված վիզաների թիվ, հատ	106100	2614	103486
Քաղաքացիների ըստ բնակության վայրի հաշվառումից հանելու թիվ, հատ	145080	130852	14228
Առողջապահական ծառայությունների տրամադրում			
Ամբուլատոր-պոլիկլինիկական այցելությունների թիվ, հատ	125000	87813	37187
ՈԲՀ-ում փորձաքննության ենթարկված անձանց թիվ, անձ	6000	3645	2355
Դեղորայքի տրամադրում ոստիկանության բժշկական վարչության ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց			
Ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին տրամադրված դեղորայքի տեսականի, հատ	146	111	35
Հասարակական կարգի պահպանություն, անվտանգության ապահովում և հանցագործությունների դեմ պայքար			
Համայնքային ոստիկանության ու անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումներում հսկողության տակ գտնվող անձանց թիվ, հատ	7400	6334	1066

Դիմումների և հաղորդումների հիման վրա նախապատրաստված նյութերի թիվ, հատ	260000	190000	70000
Հայտնաբերված կոռուպցիոն բնույթի հանցագործությունների թիվ, հատ	1190	950	240
Ձերբակալված անձանց պահելու վայրերում ձերբակալված և կալանանավորված անձանց թիվ, անձ	2800	2455	345
Զանգվածային միջոցառումների թիվը, որոնց ընթացքում ապահովվել է հասարակական կարգի պահպանություն և անվտանգություն, հատ	5000	3134	1866
Ոստիկանության զորքերի պարեկային յուրաքանչյուր կարգախմբի կողմից վերահսկվող երթուղիների միջին օրական երկարություն, կմ	7136,4	0	7136,4
ՀՀ ոստիկանության կարիքի բավարարում			
Գրասենյակային գույքի միավոր քանակ, հատ	885	695	190
Վարչական սարքավորումների քանակ, հատ	172	93	79

Հավելված 2

Ճանապարհային նշանների տեղադրման ծառայությունների կատարողական
(թիվ ՀՀ Ո ՀԲՄԾՁԲ-2021-ՃՈ/ՆՇԱՆ-17 պայմանագիր)

հազ. դրամ

Ծառայության տեսակ	Պայմանագրով		Փաստացի		
	քանակ (հատ)	գումար	քանակ (հատ)	կատարողական (%)	գումար
ճանապարհային նշանի կանգնակի պատրաստում և տեղադրում	600	6 900,0	268	44,7	3 082,0
եռանկյունի ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում	300	4 500,0	137	45,7	2 055,0
կլոր և քառակուսի ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում	1000	15 500,0	659	65,9	10 214,5
լրացուցիչ տեղեկատվության նշանի (աղյուսակի) պատրաստում և տեղադրում	160	1 760,0	61	38,1	671,0
1.34.1 , 1.34.2 ,1.34.3 ,8.22.1 , 8.22.2, 8.22.3 ճանապարհային նշանների պատրաստում և տեղադրում	90	1 620,0	83	92,2	1 494,0
5.15.1 ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում	70	1 820,0	34	48,6	884,0
5.15.2 ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում	70	1 610,0	19	27,1	437,0
Կանգառանշանի /5.16/ պատրաստում և տեղադրում	25	1 925,0	21	84,0	1 617,0
տեղեկատվության նշանի (շիթ) պատրաստում և տեղադրում	16 քմ	640,0	4.12 քմ	25,8	164,8
5.7.1 ճանապարհային նշանների տեղադրում առանց կանգնակի	30	360,0	3	10,0	36,0
5.18 (տաքսի) ճանապարհային նշանի պատրաստում և տեղադրում	25	425,0	-	-	-
5.16 ճանապարհային նշանի ցուցահարթակի պատրաստում և տեղադրում	25	275,0	24	96,0	264,0
6մմ-ոց ճոպանի մոնտաժում ամրացնող դետալներով	9	405,0	9	100,0	405,0
սֆերիկ հայելու պատրաստում և տեղադրում	3	504,0	-	-	-
փարոսիկի պատրաստում և տեղադրում բետոնե պահպանապատի վրա	180	108,0	-	-	-
փարոսիկի փայլաթերթի փոխարինում	2700	648,0	2500	92,6	600,0
Ընդամենը		39 000,0			21 924,3